ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<31>> հուլիսի 2024թ.   N ՄՈ/370-Ա

ք. Արմավիր

«ԼԵՆՈՒՂՈՒ ՋԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՎԱՐԴԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վարդինե Հովհաննիսյանի 2024 թվականի հուլիսի 30-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Վարդինե Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի օգոստոսի 5-ից 23-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վարդինե Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Մարիա Տեր-Անտոնյանին:
3. «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Մարիա Տեր-Անտոնյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի օգոստոսի 5-ից 23-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Վարդինե Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 26-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-07-31 13:02:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԴ-ի կողմից
eID

ՄԱՐԶՊԵՏ՝   Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ